ՏԵՂԵԿԱՆՔ

«ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ԼՐԱՑՎՈՂ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հոդված 6. Արդյունաբերության զարգացման պետական քաղաքականության իրականացումը

1. Արդյունաբերության զարգացման պետական քաղաքականությունը մշակում և իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը պետական և տարածքային կառավարման մարմինների միջոցով՝ օրենքով սահմանված կարգով:

2. Արդյունաբերության զարգացման պետական քաղաքականության իրականացման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորություններն են՝

1) արդյունաբերական արտադրության և արդյունաբերության զարգացման բնագավառներում Հայաստանի Հանրապետության ներքին քաղաքականության մշակումը և իրականացումը.

2) լիազոր մարմնի նպատակների, խնդիրների և գործառույթների սահմանումը.

3) պետական և տարածքային կառավարման մարմինների, հասարակական կազմակերպությունների ներգրավմամբ խորհրդատվական մարմինների ձևավորումը.

4) տեղեկատվության հավաքման, վերլուծության, կանխատեսումների իրականացումը.

5) արդյունաբերության ոլորտում ձեռնարկատիրական գործունեության խթանման, սուբսիդավորման, ապահովագրության, կոոպերացման, արդյունաբերության առանձին ենթաճյուղերի զարգացմանն ուղղված նպատակային ծրագրերի իրականացման ապահովումը.

5.1) պետական (մունիցիպալ) գնումների համար առանձին տեսակի ապրանքների ծագման երկրի որոշման կանոններին համապատասխան Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների արդյունաբերական ապրանքների եվրասիական ռեեստրի ձևավորման, վարման և ստուգման հարցերով լիազոր մարմնի սահմանումը.

6) օրենքով սահմանված այլ լիազորություններ: